

Բայց աւելի եղերական էր անոր վախճանը, զոր կը նկարագրէ գրաւոր աւանդութիւն մը. նկարագիր՝ որ ըստ ոգւոյն կը միաբանի հին մատենագրաց պատմածներուն. եւ զոր դիւրագոյն էր ժԸ դարու պատմչին փոխ առնուլ հնագունէ մը, քան ինքնին ստեղծել՝ ի վնաս անցած ու սիրուած քաղաքի համբաւոյն: — Ստրկութիւն եւ բազմաթիւ աղէտք չէին խրատած զեղծ ոստանը, եւ անեցիք կը շարունակէին իրենց մոլութեանց մէջ: Ի հեճուկս Յովհաննէս Եզնկացի վարդապետին, որ եկած էր զգաստութիւն քարոզել, « զեղխեցան եւ արբեցան », կ'ըսէ, ու կը հեզնէին զայն: Երկնառաք կամ նոյնպիսի կարծուած պատուհասք եւ երեւոյթներ սարսեցին զանոնք պահ մը. բայց շուտով մոռցան, եւ « սկսան կրկին գործել զչարիս եւ թաւալիլ ի յախտս պղծութեանց »: Համբերատար վարդապետը վերստին եկաւ ազդարարել: Այս անգամ քաղաքացիք իրենց խօլ զուարթութիւնն հոն հասուցին, որ քարոզչին թմրապեղ արբուցանելով՝ մերկացուցին զայն, սայլի մը վրայ ձգեցին, եւ այնպէս անզգեստ ու խայտառակ շրջեցնելով քաղաքին մէջ ի ձայն մունետկի, ծաղր կ'ընէին: Յետոյ բերին կախեցին զամբիւղով կաթողիկէին